## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
27 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 1. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջը.
*համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2017թ. հունվարի 27-ի թիվ 1 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1.Ազատամարտիկ /հանգուցյալ/ Լաերտ Սաղաթելյանի կնոջը նպաստ նշանակելու մասին:

2. 2017թ.-ի համար միակողմանի ծնողազուրկ երեխաների ընտանիքներին, 1-ին խմբի հաշմանդամներին և տնակում բնակվող ընտանիքներին ամենամսյա նպաստ նշանակելու մասին:

3. Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016թ.-ի դեկտեմբերի 28-ի թիվ 42 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016թ.-ի դեկտեմբերի 28-ի թիվ 43 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

5. Արարատի մարզի Դալար համայնքի 2017-2021թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 02

### ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ (ՀԱՆԳՈՒՑՅԱԼ) ԼԱԵՐՏ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԿՆՈՋԸ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36–րդ հոդվածի 2-րդ կետի 2 ենթակետի պահանջներով

*ավագանին որոշում է*

Հաշվի առնելով ազատամարտիկ (հանգուցյալ) Լաերտ Սաղաթելյանի ընտանիքի սոցիալական ծանր պայմանները, 2017թ.-ի համար կնոջը Անահիտ Սահակյանին նշանակել նպաստ ամսական 5000(հինգ հազար) դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 03

### 2017Թ.-Ի ՀԱՄԱՐ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, 1-ԻՆ ԽՄԲԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՎ ՏՆԱԿՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջներով .

*ավագանին որոշում է*

1) Դալար համայնքի միակողմանի ծնողազուրկ երեխաների 6 ընտանիքներին 2017թ.-ի համար հատկացնել ամենամսյա նպաստ:
Արայիկ Հակոբյան -10 000 դրամ
Արտակ Պետրոսյան-10000 դրամ
Մարինե Հակոբյան- 5000 դրամ
Լուսինե Ազիզյան - 5000 դրամ
Հերմինե Սարգսյան - 5000 դրամ
Տաթևիկ Նիկոյան - 5000 դրամ

2)Առաջին խմբի հաշմանդամներին.
Բադալյան Լիաննա Համլետի 1979թ . - 5000 դրամ
Հակոբյան Ռոզա Համլետի 1977թ. - 5000 դրամ
Բաղդասարյան Վահագն Գեղամի 1978թ. - 5000 դրամ
Արշակյան Արշավիր Գագիկի 1953թ. - 5000 դրամ
Ալոյան Անգին Մերուժանի 1981թ. - 5000 դրամ
Սարգսյան Ռաֆիկ Բենյամինի 1951թ. - 5000 դրամ
Ասլանյան Վարազդատ Հակոբի 2005թ - 5000 դրամ
Հակոբյան Արտյոմ Արմենի 2007թ. – 5000 դրամ
Ամիրզադյան Ջեմմա Գեղամի 2009թ. - 5000 դրամ

3) Տնակներում բնակվող ընտանիքներին
Կարապետյան Սուսաննա Մարտինի - 5000 դրամ
Հարությունյան Արայիկ Ժորայի - 5000 դրամ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 04

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 42. ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով

*ավագանին որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 43 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.՝

Որոշման տեքստում 4-14 կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

4./Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10200 դրամ,

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13200 դրամ,

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20200 դրամ,

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման համար 25200 դրամ,

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 45200 դրամ:

5/ Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շիանությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շիանությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10800 դրամ,

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13800 դրամ,
դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20800 դրամ,
ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25800 դրամ,
զ/501-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45800 դրամ:
6/ Համայնքի տարածքում `

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 200 դրամ, մեկ քառակուսի մետրի համար,
բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամհեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարված համար սահմանել 200000 դրամ,
գ/խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն տալու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 60000 դրամ,

7/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել`

**հիմնական շինությունների ներսում՝**

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 1200 դրամ,
բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 5200 դրամ,
գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10200 դրամ,
դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար15200դրամ,
ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 20200 դրամ,
զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 30200 դրամ.

**ոչ հիմնական շինությունների ներսում՝**

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 350 դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 1100դրամ,
գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 2100 դրամ,
դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 4100 դրամ,
ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 8100 դրամ,

գ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 15100 դրամ:

8/ Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանել ` 50000 դրամ:

9/ Համայնքի տարածքում` առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումովխաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել`

ա/ առևտրի օբյեկտների համար` 5000 դրամ,

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 100000 դրամ,

գ/ բաղնիքների /սաունաների/ համար` 200000 դրամ,

դ/ խաղատների կազմակերպման համար` 500000 դրամ,

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար` 250000 դրամ,

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար` 100000 դրամ:

10/ Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել`
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությամբ մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2000 դրամ,
բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 3500 դրամ,
գ/ այլ արտաքին գովազդի համար` 1500 դրամ,
ե/ սոցիալական գովազդի համար տեղական տուրք չսահմանել:
11. Սույն որոշման 1 – ին , 2 – րդ , 3 – րդ, ինչպես նաև մնացած մյուս կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:
12/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանել 500 դրամ:
13/ Դալար համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:

14/ Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1500 դրամ:

Տեղական վճարներ
ա)Համայնքի տարածքում շինարարական կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` 5000 դրամ.
բ) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար` ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` 1000դրամ.

գ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելուհետ կապված ծախսերի փոխհատուցման վճար յուրաքանչյուր մասնակցի համար 1000 դրամ.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 05

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 43 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով

*ավագանին որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 43 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.՝

Որոշման տեքստում ՝

1. «78948.4» թիվը փոխարինել «78928.4» թվով, «55576.0» թիվը փոխարինել «55556,0» թվով :
2. 4. կետի 1-ին տողում «Տեղական տուրքեր» բառակապակցության մեջ «296.0»-ը փոխարինել «276.0»-ով, 5-րդ տողը՝ «150.0»-ը փոխարինել «130.0» -ով:
3. 9-րդ կետի 4-րդ տողում՝

«Աղբահանմանն սանմաքրման ծրագրի (05.01.01.51) նախատեսվում է 4213 հոդվածով աղբահանության և մաքրման աշխատանքներ 1800,0 հազ. դրամ» նախադասության վերջում ավելացնել՝ «4823 հոդվածով բնապահպանական վճար-20.0 հազ դրամ:

12-րդ տողում՝ «120.0»-ը փոխարինել «80.0»-ով:

4. 6. –րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 6. Ավտոբուսի կանգառի կառուցում 5112-675.0 հազ դրամ, 5134-25.0 հազ. դրամ:»

9. Համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակման աշխատանքների կատարման ծախսեր 5134-4172.4 հազ. դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 06

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով.

*համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի (կցվում է):

2. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 26-ի «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2015-2018ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 25 որոշումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ